PENAL REFORM INTERNATIONAL

PROMOTING THE NELSON MANDELA RULES

# ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ)

## Հակիրճ ուղեցույց



**ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) հակիրճ ուղեցույց**

Սույն հրապարակումը պատրաստվել է Միացյալ Թագավորության Կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Սույն փաստաթղթի բովանդակության միակ պատասխանատուն Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպությունն է և այն ոչ մի պարագայում չի կարող համարվել Միացյալ Թագավորության Կառավարության դիրքորոշման արտահայտություն:

Հայերեն տարբերակը պատրաստվել է AISPIRA ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության կողմից և իրականացվում է Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի, «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» կազմակերպության կողմից:

Սույն փաստաթուղթը կարելի է ազատ ուսումնասիրել, համառոտագրել, վերահրատարակել և թարգմանել հատվածաբար կամ ամբողջությամբ՝ պայմանով, որ այն չօգտագործվի վաճառքի կամ առևտրային նպատակներ հետապնդող այլ գործունեության համատեքստում:
Սույն հրապարակման բովանդակության ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպության կողմից: Պարտադիր է պատշաճ հղում անել Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպությանը և սույն փաստաթղթին: Հարցերը կարող եք ուղարկել հետևյալ էլ. փոստին publications@penalreform.org.

**Penal Reform International**
info@penalreform.org
Twitter: @PenalReformInt
Facebook: @penalreforminternational
www.penalreform.org

Առաջին անգամ հրապարակվել է 2016թ. հունվարին.
© Penal Reform International 2016

Գրաֆիկական դիզայնը և նկարազարդումը՝ Ալեքս Վալիի Alex Valy.

# ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ)

Ողջ աշխարհում ավելի քան 10.2 միլիոն տղամարդ, կին և երեխա բանտում են, և մոտ մեկ երրորդը սպասում է դատավարության։

ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոնները (Նելսոն Մանդելայի կանոնները) միաձայն ընդունվել են 2015թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից և սահմանել բանտերի լավ կառավարման նվազագույն չափանիշները, այդ թվում՝ ապահովելու բանտարկյալների իրավունքները։

Նելսոն Մանդելայի կանոնները ամբողջությամբ նոր չեն, այլ 1955թ.-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (ՆՍԿ) թարմացված տարբերակն են։ Կանոնները վերանայվել են ութ բովանդակային մասերում՝ արտացոլելու այն չափանիշները, որոնք հայտնվել են ուղղիչ հաստատությունների գործունեության տրամաբանության մեջ և մարդու իրավունքներում՝ 1955թ.-ից ի վեր։

**Հարավային Աֆրիկայի Քեյփթաունում Միջկառավարական փորձագիտական խմբի հանդիպման ընթացքում վերանայված տեքստի վերաբերյալ բանակցությունների ավարտելուց հետո որոշում կայացվեց, որ դրանք պետք է կոչվեն «Նելսոն Մանդելայի կանոններ»՝ ի պատիվ Հարավային Աֆրիկայի հանգուցյալ նախագահի, ով 27 տարի անց է կացրել բանտում և ջատագովել բանտարկյալների իրավունքները։**



# Վերանայման ընթացքը

## Ինչու՞ են կանոնները վերանայվել:

ՄԱԿ-ի անդամ երկրներն ընդունեցին, որ 60 տարի առաջ ընդունվելուց հետո Նվազագույն ստանդարտ կանոնները հնացել էին և չէին արտացոլում մարդու իրավունքների և քրեական արդարադատության հիմնական զարգացումները:

## Ովքե՞ր են վերանայել կանոնները:

2010թ.-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի բանաձևով Միջկառավարական փորձագիտական խմբին հանձնարարվեց վերանայել կանոնները: Անդամ պետությունները համաձայնեցին գործընթացին և վերանայումներին, իսկ ՄԱԿ մարմինները, միջկառավարական կազմակերպությունները, քաղհասարակությունն ու ակադեմիկոսները մասնակցեցին դրան:

Փորձագիտական խումբը առաջին անգամ հանդիպել է 2011թ.-ին և որոշում կայացրեց անել այսպես կոչված «թիրախային վերանայում»՝ թարմացնելով ամենահնացած հատվածները և կանոնները՝ անփոփոխ թողնելով կառուցվածքն ու շատ կանոններ: Վերանայված տեքստի վերաբերյալ քննարկում կազմակերպվեց հետագա երեք հանդիպումների ընթացքում:

Նելսոն Մանդելայի կանոնները նաև վերահամարակալվեցին՝ հաշվի առնելով բովանդակային փոփոխությունները:

Վերանայման ընթացքը համատեղել է քրեական արդարադատության և մարդու իրավունքների չափանիշները մեկ փաստաթղթում՝ պաշտպանելով բանտարկյալների իրավունքները և տրամադրելով վստահելի ու թարմացված ուղղորդում բանտերի աշխատակազմերի և ղեկավարության համար:

---

**Նվազագույն ստանդարտ կանոնների վերանայման ընթացքի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար ներբեռնեք ՀԿ-ների համատեղ ճեպազրույցը հետևյալ հասցեից: www.penalreform.org/resource/joint-ngo-briefing-process-review-standard-minimum-rules**



# Նելսոն Մանդելայի կանոնների կիրառումը՝ ընդունման պահից մինչ ազատ արձակելը

Կանոն 122-ը վերաբերում է բանտի կառավարման բոլոր կողմերին և արծարծում է թե կալանավորների և թե դատապարտված բանտարկյալների հետ վարվեցողության վերաբերյալ համաձայնեցված նվազագույն չափանիշները:

**Հիմնական սկզբունքներ**

**1-5 կանոններն ապահովում են հետևյալ հիմնական սկզբունքները:**

- **Բանտարկյալներին պետք է վերաբերվել՝ հարգելով նրանց անքակտելի արժանապատվությունն ու որպես մարդ նրանց արժեքը:**
- **Արգելվում է խոշտանգումն ու այլ վատ վերաբերմունքը:**
- **Բանտարկյալների հետ պետք վարվել՝ հաշվի առնելով նրանց կարիքները, առանց խտրականության:**
- **Բանտի նպատակն է պաշտպանել հասարակությունն ու նվազեցնել կրկնահանցագործությունը:**
- **Բանտարկյալների, անձնակազմի, ծառայություններ մատուցողների և այցելուների անվտանգությունը մշտապես առաջնային է:**

Կարմիր աստղանիշը * նշանակում է, որ այս ոլորտում փոփոխություններ են եղել:

## Ընդունելություն բանտ

### ⇨ Բաշխում * [կանոն 59]

Կանոնները պահանջում են տեղաբաշխել բանտարկյալներին իրենց տանը մոտ՝ սոցիալական վերականգնումը հեշտացնելու նպատակով:

### ⇨ Գրանցում * [կանոններ 7, 8]

Այն տեղեկությունները, որոնք պետք է հավաքագրել և ներառել բանտարկյալի ֆայլում այժմ ընդգրկում են, օրինակ, ընտանիքի անդամների անունները և բնակության վայրը, ինչպես նաև տեսանելի վնասվածքներն ու նախկինում վատ վերաբերմունքի վերաբերյալ գանգատները:

### Տեղեկատվություն* [Կանոններ 54, 55]

Երբ բանտարկյալները ժամանում են, նրանց պետք է տեղեկություն տրամադրվի բանտի ռեժիմի, այդ թվում՝ բանտային կանոնների, և իրավական խորհրդատվություն ստանալու ձևի վերաբերյալ՝ նրանց հասկանալի լեզվով և ձևով:

### Բանտարկյալների ունեցվածքը [Կանոններ 7, 67]

Բանտը պետք է ապահով կալանքի տակ դնի բանտարկյալներին պատկանող ցանկացած ունեցվածք (որը նրանց չի թույլատրվում պահել իրենց մոտ)՝ ստորագրված գույքացուցակով: Ազատ արձակվելուց հետո ունեցվածքը պետք է վերադարձվի նրանց՝ լավ վիճակում:

### Բժշկական սկրինինգ* [Կանոններ 30, 34]

Առողջապահության ոլորտի մասնագետը պետք է զննի յուրաքանչյուր բանտարկյալին՝ ժամանելուց հետո որքան հնարավոր է շուտ: Համաձայն կանոնների՝ նախնական զննումը ոչ միայն պետք է գնահատի առողջապահական կարիքները և բուժում նշանակի, այլև նույնականացնի հոգեբանական կամ այլ սթրեսային կամ վատ վերաբերմունքի նշաններ, որոնք պետք է փաստաթղթավորվեն և զեկուցվեն պատկան մարմնին:

## Դասակարգում և կարիքները հաշվի առնելը

### Խմբավորում [Կանոն 11]

Բանտարկյալների որոշ խմբեր պետք է տեղավորվեն առանձին՝ որպես պաշտպանության միջոց, և բավարար անհատական վերաբերմունքը հեշտացնելու նպատակով: Սա վերաբերում է տղամարդկանց և կանանց, կալանավորներին և դատապարտված բանտարկյալներին, երեխաներին և չափահասներին:



### Դասակարգում [Կանոններ 89, 93, 94]

Անհատական գնահատումը կարևոր է՝ բացահայտելու այն ռիսկերը, որ բանտարկյալները կարող են ներկայացնել իրենց, անձնակազմին կամ այլ բանտարկյալներին, ինչպես նաև այն ռիսկերը, որոնց նրանք կարող են ենթարկվել, նրանց յուրահատուկ կարիքները և այն վերականգնողական միջոցառումները, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել: Դասակարգման համակարգերը պետք է ճկուն լինեն՝ խթանելու մոտեցման անհատականացումը:

### Հատուկ կարիքներ* [Կանոններ 2, 5]

Բանտերը պետք է հարմարություն ստեղծեն ֆիզիկական, հոգեկան և այլ հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար՝ ապահովելու ծառայությունների և ծրագրերի հասանելիությունը հավասար հիմունքներով: Հատուկ կարիքները բավարարելու համար ձեռնարկվող միջոցառումները չպետք է համարվեն խտրական:

## Բանտի աշխատակազմ

### Անվտանգություն* [Կանոն 1]

Բանտի աշխատակազմի անվտանգությունը պետք է մշտապես ապահովվի:

### Աշխատանքի ընդունում [Կանոններ 74, 78]

Բանտի աշխատակիցները պետք է նշանակվեն լրիվ դրույքով և ունենան քաղաքացիական ծառայության կարգավիճակ՝ պաշտոնավարման ժամկետի ապահովմամբ՝ լավ վարքագծի, արդյունավետության և ֆիզիկական պատրաստվածության պայմաններով: Իրենց աշխատանքի համատեքստում բանտի աշխատակազմին աջակցելու նպատակով բանտերը պետք է աշխատանքի ընդունեն բավարար քանակով մասնագետներ, այդ թվում՝ հոգեբույժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և ուսուցիչներ:



### Վարձատրություն [Կանոն 74]

Աշխատավարձերը պետք է լինեն բավարար՝ բանտի համապատասխան անձնակազմ ներգրավելու համար, իսկ աշխատանքի առավելությունները և աշխատանքային պայմանները պետք է բարենպաստ լինեն՝ հաշվի առնելով, որ աշխատանքը պահանջված բնույթ ունի:

### Հավաքագրում [Կանոններ 74, 81]

Քանի որ բանտի կառավարումը բարդ գործ է, անհրաժեշտ է ուշադրությամբ ընտրել բանտի անձնակազմը, քանի որ մասնագիտացված բանտերը կախված են նրանց բարեխղճությունից, մարդասիրությունից, մասնագիտական կարողություններից և անձնական համապատասխանությունից: Միայն կին աշխատակիցներ պետք է հսկեն կին բանտարկյալներին:

### Վերապատրաստում* [Կանոններ 75, 76]

Բանտի աշխատակիցները պետք է շարունակական վերապատրաստումների հնարավորություն ունենան, որպեսզի կարողանան մասնագիտորեն կատարել իրենց պարտականությունները: Նման վերապատրաստումը պետք է արտացոլի ապացույցների վրա հիմնված լավագույն պրակտիկան, պետք է տրամադրվի աշխատանքից առաջ և աշխատանքի ընթացքում, և պետք է անդրադառնա ուժի օգտագործմանը, որոշակի տեսակի բանտարկյալների հետ աշխատանքին, ինչպես նաև դինամիկ անվտանգության հայեցակարգին: Դինամիկ անվտանգության մոտեցումը միավորում է անձնակազմ-բանտարկյալներ դրական հարաբերությունները արդար վերաբերմունքի և բանտարկյալների համար նպատակային գործողությունների հետ, ինչը նպաստում է նրանց՝ հասարակությանը հետագա վերաինտեգրմանը:

### Կառավարում [Կանոններ 79, 80]

Կանոնները նկարագրում են բանտերի տնօրենների պարտականությունները, ինչպես նաև այն որակավորումները, որ նրանք պետք է ունենան:

## Ֆայլեր և գրառումներ

Բանտերի ֆայլերի ղեկավարման համակարգը մշտապես անհրաժեշտ է եղել՝ որպես ցանկացած բանտի արդյունավետ աշխատանքի կարևոր գործիք: Վերանայված Կանոններն այժմ ճանաչում են, որ համակարգը կարող է լինել էլեկտրոնային, և տալիս են ուղղորդում առ այն, թե ինչ պետք է ներառված լինի ֆայլերում, ով ունի դրանց հասանելիությունը, և ինչպես պետք է տվյալներն օգտագործվեն:

### Համակարգ* [Կանոններ 6, 10]

Պետք է գոյություն ունենա բանտարկյալների ֆայլերի կառավարման ստանդարտացված համակարգ: Լինի դա էլեկտրոնային տվյալների բազա թե թղթային համակարգ, կարևոր է ունենալ անվտանգ աուդիտի մատյան՝ կանխելու ֆայլերի չթույլատրված հասանելիությունը կամ փոփոխությունը: Տվյալները պետք է վերլուծության ենթարկվեն՝ զբաղվածության մակարդակը և միտումները բացահայտելու համար:



### Տեղեկություն* [Կանոններ 7-9, 26, 92]

Յուրաքանչյուր ֆայլ պետք է ներառի տեղեկատվություն այն հարցերի մասին, որոնք ազդում են բանտարկյալների վրա, այդ թվում՝ նրա անձնական տվյալները, ազատման և/կամ փոխադրման ամսաթիվը, իրավական գործի կարգավիճակը, դասակարգման զեկույցները, կարգապահական տույժերը և ներկայացված բողոքները: Անհատական բժշկական ֆայլերը ևս պետք է պահվեն՝ առանձին և գաղտնի, և պետք է հասանելի լինեն բանտարկյալին:

## Բանտարկյալների տեղաբաշխում

### Հիգիենա [Կանոններ 15, 16, 18-21]

Յուրաքանչյուր բանտ պետք է ունենա մաքուր սանիհանգույց՝ ապահովելու բանտարկյալների արժանապատվությունն ու հիգիենան: Պետք է նաև ապահովվի ջրի հասանելիություն, զուգարանի պարագաներ (այդ թվում՝ հիգիենիկ սրբիչներ կանանց համար), բավարար քանակությամբ հագուստ և անկողնային պարագաներ: **[տես նաև ՄԱԿ-ի՝ Բանգկոկի Կանոններ]**



### ➪ Սնունդ և ջուր* [Կանոններ 22, 35, 42, 43]

Բանտարկյալներին պետք է տրամադրվի սննդարար և որակյալ ուտելիք և խմելու ջուր՝ ըստ պահանջի: Սնունդը և ջուրը չեն կարող սահմանափակվել որպես կարգապահական տույժ, և պետք է տրամադրվեն առանց բացառության:

### ➪ Քուն [Կանոններ 12-14, 42, 113]

Եթե կացարանը խցում է, ապա յուրաքանչյուր խցում պետք է տեղավորվի միայն մեկ բանտարկյալ, իսկ հանրակացարանների դեպքում պետք է կիրառվեն ընտրության մանրակրկիտ ընթացակարգեր՝ որոշելու, թե ովքեր են միասին տեղավորվելու: Կալանավորները պետք է տեղավորվեն մեկուսի  խցերում: Պետք է ապահովվի պատշաճ ջեռուցում և օդափոխություն, օդ, լույս և նվազագույն անհրաժեշտ տարածք՝ առանց բացառության:

### ➪ Երեխաներ* [Կանոններ 28, 29]

Երեխաներին իրենց ծնողի հետ բանտում տեղավորելու որոշումը պետք է բխի երեխայի լավագույն շահերից: Պետք է ապահովվի նախածննդյան և հետծննդյան խնամքը,երեխայի խնամքի պարագաներ և երեխայի առողջապահական ծառայություններ: Բանտում տեղավորված երեխաներին երբեք չպետք է վերաբերվել որպես բանտարկյալ: [See also UN Bangkok Rules]

## Կագապահություն և տույժեր

### ➪ Տեղեկություն* [Կանոններ 54, 55]

Համաձայն Կանոնների՝ իրավունքներն ու պարտականությունները հասկանալը որոշիչ հանգամանք է բանտի ամենօրյա կառավարման համար: Ժամանելուն պես բանտարկյալներին պետք է տեղեկություն տրամադրել բանտի կարգավորումների, իրենց իրավունքների և պարտականությունների, կարգապահական տույժերի և իրավաբանական խորհրդատվություն (այդ թվում՝ իրավաբանական օգնություն) ստանալու վերաբերյալ: Այս տեղեկությունը պետք է տրամադրվի հասկանալի լեզվով և ձևաչափով:



## Խուզարկություն* [Կանոններ 50-53, 60]

Խուզարկության ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով կամ կանոնակարգերով և խուզարկություն անցկացնելու վերաբերյալ ցանկացած որոշում պետք է հաշվի առնի, թե արդյոք դա անհրաժեշտ և համաչափ է:Խուզարկության ընթացակարգերը պետք է հարգեն բանտարկյալի արժանապատվությունն ու գաղտնիության իրավունքը և չպետք է օգտագործվեն նրանց ոտնձգության ենթարկելու կամ վախեցնելու համար: Մարմնի ինվազիվ (միջամտող) խուզարկությունը պետք է լինի վերջին միջոցը, իսկ խուզարկության արդյունքում արված բացահայտումները պետք է գրանցվեն: Այցելուների խուզարկության ժամանակ պետք է ապահովվեն առնվազն նույն երաշխիքները, ինչ բանտարկյալների խուզարկության ժամանակ, և պետք է հաշվի առնել նրանց՝ բանտարկյալ չլինելու կարգավիճակը:

## Մեկուսի բանտարկություն* [Կանոններ 43-46]

Հաշվի առնելով ֆիզիկական և հոգեկան առողջության վրա ունեցած կործանարար ազդեցությունը՝ Կանոնները սահմանում են, որ մեկուսի բանտարկությունը պետք է օգտագործվի բացառիկ դեպքերում՝ որպես վերջին միջոց, որքան հնարավոր է քիչ ժամանակով՝ համապատասխան մարմնի թույլտվությունից հետո, և պետք է ենթակա լինի անկախ վերանայման: Անժամկետ և երկար մեկուսի բանտարկությունը (15 օրից ավելի) արգելվում է առհասարակ: Որոշ խմբերի համար, օրինակ՝ հղի կանանց կամ կրծքով կերակրող կանանց դեպքում, մեկուսի բանտարկությունն արգելվում է:

Կանոնները սահմանում են մեկուսի բանտարկությունը որպես օրվա մեջ 22 ժամից ավել բանտարկություն՝ առանց իմաստալից մարդկային շփման: «Իմաստալից մարդկային շփումը» ասելով պետք է ճանաչել այն տառապանքը, որի միջով անցնում է յուրաքանչյուր անձ, ով մեկուսացված է և զրկված է այլ մարդկանց հետ շփումից: **[տես նաև ՄԱԿ-ի՝ Բանգկոկի կանոններն ու ՄԱԿ-ի՝ Հավանայի կանոնները]**

## Կարգապահական զանցանքներ* [Կանոններ 36-43]

Կանոնները սահմանում են այն ընթացակարգերն ու երաշխիքները, որոնք պետք է գործեն ենթադրյալ կարգապահական զանցանքի դեպքում: Օրենքները կամ կարգավորումները պետք է հստակ սահմանեն, թե ինչ է կարգապահական զանցանքը, ցանկացած տույժ պետք է համաչափ լինի գործողությանը, և բանտարկյալները պետք է իրենց պաշտպանելու հնարավորություն ունենան:

Կարգապահական տույժերի կիրառումը պետք է գրանցվի: Խրախուսվում է օգտագործել վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ՝ կանխելու կարգապահական զանցանքներն ու լուծելու կոնֆլիկտները: Երբ դա բխում է արդարադատության շահերից, մասնավորապես այն դեպքերում, երբ կա լուրջ կարգապահական խախտման մեղադրանք, բանտարկյալները պետք է կարողանան պաշտպանել իրենց անձամբ կամ իրավական օգնության միջոցով:

### Խափանման միջոցներ* [Կանոններ 43, 47-49]

Արգելվում են խափանման այն գործիքները, որոնք էությամբ նվաստացնող են կամ ցավ են պատճառում: Ցանկացած այլ գործիքի կիրառման համար անհրաժեշտ է որոշակի պայմանների առկայություն.դրանց օգտագործումը լեգիտիմ է միայն այն դեպքում, երբ հասանելի չէ առկա ռիսկը վերահսկելու ավելի թեթև ձև, և դրանց կիրառումը պետք է դադարեցնել հնարավորինս շուտ: Խափանման միջոցը պետք է այլևս չկիրառվի, երբ բանտարկյալը հայտնվի դատարանում, և դրանք երբեք չպետք է կիրառվեն կանանց հանդեպ ծննդաբերության ցավերի, ծննդաբերության ընթացքում կամ դրանից անմիջապես հետո:

### Ուժի կիրառում [Կանոն 82]

Անձնակազմը չպետք է ուժ կիրառի բանտարկյալների հանդեպ՝ բացառությամբ ինքնապաշտպանության նպատակով կամ փախուստի փորձի ժամանակ: Ուժի ցանկացած կիրառում չպետք է անցնի խիստ անհրաժեշտության սահմանները, և պետք է հաջորդիվ զեկուցվի: Բանտի աշխատակիցները պետք է զինված լինեն միայն բացառիկ հանգամանքներում: ՄԱԿ-ի չափանիշները նաև պահանջում են ուժի կիրառման խիստ կարգավորումներ, ինչպես նաև պահանջում են, որ ուժի կամայական կիրառումը կամ չարաշահումը պատժվի որպես հանցանք: **[See also UN Basic Principles on the Use of Force and Firearms by Law Enforcement Officials]**



## Արտաքին աշխարհի հետ կապ



### Ընտանիք և ընկերներ [կանոններ 43, 58-60, 68, 70]

Բանտարկյալներին թույլատրվում է այցելություններ ունենալ և կապ հաստատել իրենց ընտանիքի և ընկերների հետ այլ միջոցներով, ինչպիսիք են հեռախոսը կամ նամակները: Այցելության սահմանափակումները չպետք է օգտագործվեն որպես կարգապահական միջոց, հատկապես կին բանտարկյալների և նրանց երեխաների համար:

Բանտարկյալներն իրավունք ունեն տեղեկացնել ընկերներին և ընտանիքին իրենց բանտարկման, տեղափոխման և լուրջ հիվանդության կամ վնասվածքի վերաբերյալ: Եթե մտերիմ հարազատը կամ ամուսինը/զուգընկերը լրջորեն հիվանդանում կամ մահանում են, բանտարկյալին պետք է թույլ տալ այցելել կամ գնալ հուղարկավորության արարողությանը: Ամուսնու/զուգընկերոջ այցելության իրավունքները պետք է իրականացվեն առանց խտրականության: [տես նաև ՄԱԿ-ի՝ Բանգկոկի կանոնները]

### Իրավական ներկայացուցիչներ* [կանոններ 41, 53, 61, 119, 120]

Բանտարկյալներին պետք է ապահովել բավարար հնարավորությամբ, ժամանակով և գաղտնիություն ապահովող տարածքով՝ իրենց իրավաբանի հետ հանդիպելու համար: Նրանք պետք է հասանելիություն ունենան արդյունավետ իրավական օգնության՝ համաձայն միջազգային չափանիշների:

Բանտարկյալներն իրավունք ունեն հասանելիություն ունենալ և պահել իրենց իրավական փաստաթղթերը, որպեսզի կարողանան արդյունավետ մասնակցություն ունենալ իրավական վարույթին: [տես նաև Քրեական արդարադատության համակարգերում իրավական օգնության վերաբերյալ ՄԱԿ-ի սկզբունքներն ու ուղեցույցները]

### Դեսպանատներ [կանոն 62]

Օտարերկրյա քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան կապ հաստատել իրենց հյուպատոսական ներկայացուցիչների հետ: Սույն կանոնը ճանաչում է նրանց հատուկ իրավիճակը, որը կարող է ներառել բանտի ընդհանուր լեզվով հաղորդակցվելու անկարողությունը, իրավական համակարգին վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքների պակասը, և ընտանիքի անդամների հետ կապ հաստատելու դժվարությունները:

## Առօրյա գործողություններ

### Վերականգնման/վերասոցիալականացման ծրագրեր* [Կանոններ 4, 88, 89, 91-94, 96-108]

Բանտերը պետք է առաջարկեն կրթություն, մասնագիտական վերապատրաստումներ, աշխատանք, և վերականգնման/վերասոցիալականացման ու վերաինտեգրման համար անհրաժեշտ այլ օգնություն: Սա արտացոլում է բանտարկման՝ հասարակությունը պաշտպանելու և կրկնահանցագործությունը նվազեցնելու առաջնային նպատակը: Բանտերը պետք է ճանաչեն բանտարկյալների վերականգնման հարցում աշխատակիցների ունեցած կարևոր դերը:

### Աշխատանք* [Կանոններ 40, 96-103]

Ծառայեցնելը, ստրկությունը կամ անձնական կամ ցանկացած բանտի սեփական օգուտի համար բանտարկյալներից աշխատել պահանջելն արգելվում է: Ցանկացած աշխատանք պետք է օգտակար լինի բանտարկյալի ազատվելուց հետո աշխատանքային հեռանկարների տեսանկյունից կամ վարձատրվի, և տեղի ունենա անվտանգ ու իրավաչափ պայմաններում: Բանտարկյալները չպետք է աշխատանքի ընդունվեն որևէ կարգապահական հսկողության իրավասությամբ:



### Իմաստալից գործողություններ [Կանոններ 4, 23, 64-66, 105]

Իմաստալից գործողություններ ապահովելը օգնում է բանտի կառավարմանը, ինչպես նաև բանտարկյալների հոգեկան առողջությանն ու վերականգնմանը: Պետք է ապահովել սպորտով զբաղվելու հնարավորություններ և թույլատրել օրական առնվազն մեկ ժամ դրսում մարզվել: Բանտի գրադարանը պետք է հասանելի լինի, և բանտարկյալներին պետք է թույլատրվի դավանել իրենց կրոնը:

### Կրթություն [Կանոն 104]

Քանի որ կրթությունը կարևոր դեր ունի կրկնահանցագործությունը կանխելու հարցում, բանտարկյալներին պետք է տրամադրել սովորելու հնարավորություններ: Առաջարկվող դասերը պետք է լինեն համայնքային կրթական համակարգի մակարդակին և պետք է հասանելի լինեն բոլոր բանտարկյալներին: Ոչ գրագետ կամ երիտասարդ բանտարկյալների համար կրթությունը պարտադիր է:

## Ֆիզիկական և հոգեկան առողջություն

### Առողջապահության հասանելիություն* [Կանոններ 24-29, 31]

Քանի որ պետությունը կրում է պատասխանատվություն այն անձանց համար, ում զրկում է ազատությունից, բանտում պետք է ապահովվեն առողջապահական ծառայություններ՝ խնամքի նույն մակարդակով, ինչ համայնքում:

Լավ փորձին համապատասխան՝ բանտում առողջապահությունը պետք է կազմակերպվի համայնքային առողջապահական ծառայությունների հետ սերտ համագործակցությամբ՝ այդ թվում նաև խնամքի շարունակականությունն ապահովելու համար: Կանոնները բացատրում են, թե ինչ բաղադրիչներ պետք է ունենան բանտային առողջապահական ծառայությունները, այդ թվում նաև ծնողի հետ բանտում գտնվող երեխաների համար:



## Առողջապահական անձնակազմի դերը *

[Կանոններ 25, 30-34]

The role of healthcare professionals in prison must be clearly
Առողջապահության ոլորտի մասնագետների դերը բանտում պետք է հստակ տարանջատվի բանտի վարչակազմի դերից: Բանտի բուժաշխատողների համար գործում են էթիկայի և մասնագիտական նույն կանոնները, ինչ բանտից դուրս: Բանտում նրանց դերն է՝ գնահատել, խթանել և բուժել իրենց բուժառուների՝ բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Սա ներառում է վարակիչ հիվանդությունների,նյութերից կախվածությունների, հոգեկան առողջության բուժում և խնամք, ինչպես նաև ատամնաբուժական խնամք: Առողջապահական անձնակազմը չպետք է ներգրավվի բանտի կառավարման հարցերում, ինչպիսիք են կարգապահական միջոցառումները, և նրանց բժշկական որոշումները չպետք է փոփոխվեն կամ անտեսվեն բանտի ոչ բժշկական անձնակազմի կողմից: Բանտի առողջապահական անձնակազմը պարտավոր է զեկուցել խոշտանգման կամ այլ անմարդկային վերաբերմունքի ցանկացած նշանի վերաբերյալ:

## Բանտարկյալները որպես բուժառուներ *

[Կանոններ 26, 32]

Երբ բանտարկյալները դիմում են բժշկի, նրանք բուժառուներ են՝ ճիշտ այնպես, ինչպես կլինեին համայնքում: Բուժառուները պետք է իրենց տեղեկացված համաձայնությունը տան ցանկացած բժշկական միջամտության և ստուգման համար, իսկ նրանց բժշկական գրառումները գաղտնի են: Անձնակազմի և այլ բանտարկյալների պաշտպանությունը, օրինակ, վարակիչ հիվանդություններից, կարելի է կազմակերպել միայն անհրաժեշտ տեղեկատվության բացահայտմամբ, որպեսզի հնարավոր լինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցները՝ միևնույն ժամանակ պահպանելով բժշկական գաղտնիությունը:

## Առողջապահության վերաբերյալ խորհրդատվություն * [Կանոն 35]

The competent public health body should regularly inspect and advise the prison director on a variety of issues impacting on the health and well-being of prisoners - as well as prison staff. This includes food, hygiene of the institution and of prisoners, sanitation, temperature, lighting and ventilation, and other conditions.

## Ստուգումներ և քննություններ

### Ստուգումներ * [Կանոններ 83-85]

Ընդունելով, որ ստուգումները ցանկացած պրոֆեսիոնալ և թափանցիկ բանտային համակարգի անբաժանելի մասն են, Կանոնները պահանջում են ներդնել երկակի համակարգ, որը կներառի կենտրոնական բանտային վարչակազմի կողմից մշտադիտարկում, ինչպես նաև արտաքին՝ անկախ մշտադիտարկում: Այսպիսի մշտադիտարկման նպատակն է ապահովել, որ բանտերը կառավարվեն օրենքների և կարգավորումների համաձայն, ինչպես նաև պաշտպանել բանտարկյալների իրավունքները: Կանոնները թվարկում են, թե ինչ իրավասություններ պետք է ունենա ստուգումներ իրականացնող տեսուչը, և պարզաբանում են զեկուցման և հետագա միջոցառումների ընթացակարգերը:

### Քննություններ * [Կանոններ 57, 71]

Բանտերը պետք է զեկուցեն անազատության մեջ գտնվելու ժամանակ ցանկացած մահվան դեպքի, լուրջ վնասի մասին, ինչպես նաև եթե ողջամիտ հիմքեր ունեն՝ կարծելու, որ հնարավոր է՝ խոշտանգում կամ անմարդկային վերաբերմունք է տեղի ունեցել՝անկախ ֆորմալ բողոքի առկայությունից: Սա պետք է զեկուցվի անկախ մարմնին, ով ունի քննություն իրակնացնելու մանդատ:

Բանտի ղեկավարությունն ու անձնակազմը պետք է լիարժեք համագործակցեն նման քննություններին և ապահովեն, որ բոլոր ապացույցները պահպանվեն: Դեպքի հետ առնչություն ունեցող անձինք չպետք է որևէ կերպ ներգրավվեն քննությանը:

## Տեղափոխում և տրանսպորտային միջոցով փոխադրում [Կանոններ 26(2), 73]

Բանտարկյալները պետք է տեղափոխվեն բավարար պայմաններում և պետք է հնարավորինս քիչ երևան հանրությանը: Եթե բանտարկյալը տեղափոխվում է մեկ այլ բանտ, ապա նրա բժշկական ֆայլերը ևս պետք է տեղափոխվեն:



## Բանտից ազատ արձակում

### Ունեցվածք [Կանոն 67]

Ընդունվելիս բանտարկյալից վերցված ցանկացած ունեցվածք կամ գումար պետք է վերադարձվի նրան բանտից ազատ արձակման պահին, և դրանք պետք է պահպանված լինեն լավ վիճակում: Բանտարկյալը պետք է ստորագրի առ այն, որ իրեն վերադարձվել է իր ունեցվածքը:

### Վերաինտեգրում [Կանոններ 88, 90]

Պետք է կիրառվեն բանտարկյալներին համայնքին աստիճանաբար վերաինտեգրելու հնարավորություններ, ինչպիսիք են բանտարկությունից ազատվելուց առաջ սխեմաները կամ բաց բանտերը: Պետք է ապահովվեն բանտից դուրս գալուց հետո խնամքի ծառայություններ:



**Կարևոր է հիշել, որ Նելսոն Մանդելայի կանոնները պետք է կարդալ ՄԱԿ-ի այլ՝ գործող չափանիշներին զուգահեռ, այդ թվում՝ Ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքները, Կին բանտարկյալների վերաբերյալ Բոնգկոկի կանոններ, ՄԱԿ-ի՝ Անչափահասների գործերով արդարադատության իրականացման պեկինյան կանոններ, ՄԱԿ-ի՝ Տոկիոյի կանոնները ազատազրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ, ՄԱԿ-ի՝ Իրավապահ մարմինների վարքագծի կանոններ, և այլն:**

## Հիմա ի՞նչ:

Բանտի չափանիշները վերանայելը բարդ առաջադրանք է: Բոլոր 122 կանոնների իրականացման համար պահանջվում է ժամանակ և ռեսուրսներ, սակայն ճիշտ կառավարմամբ, վերապատրաստմամբ և մարդու իրավունքների հանդեպ հարգանքի մշակույթով հնարավոր է գործի դնել Նելսոն Մանդելայի կանոններից շատերը՝ առանց մեծ ծախսերի:

PRI-ն աշխատում է տարբեր քաղաքական և սոցիալական իրողություններով և զգայուն հարցերով շատ տարբեր տարածաշրջաններում և երկրներում: Մենք հաշվի ենք առնում այս տարբեր համատեքստերն ու համապատասխանաբար հարմարեցնում մեր աշխատելաոճը: Մեր մոտեցումը զգայուն է նաև գենդերային և մշակութային հարցերի նկատմամբ:

Մենք ունենք քրեական արդարադատության և քրեական բարեփոխումների ոլորտում ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում աշխատանքի 25 տարվա փորձ: Մեր անկախությունն ու մասնագիտացված գիտելիքն ու փորձը դարձնում են մեզ արժեքավոր գործընկեր թե կառավարությունների և թե քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, որոնք սկսում են աշխատել Նելսոն Մանդելայի կանոններն իրականացնելու ուղղությամբ:

PRI-ի աշխատանքն ընդգրկում է ուղղորդում և օգնություն՝ Կանոնների կիրառմանը ներգրավված շահագրգիռ կողմերին: Սա արվում է հրապարակումների, սեմինարների, վերապատրաստումների և միջոցառումների միջոցով: Կարող եք նաև այցելել մեր կայքէջ՝**www.penalreform.org**՝ հետևյալ նյութերին հասանելիություն ստանալու համար

- Նելսոն Մանդելայի կանոնները (հասանելի մի քանի լեզուներով);
- Մեր նոր՝ Նելսոն Մանդելայի կանոնները ներկայացնող երկու րոպեանոց անիմացիան;
- Այլ տեղեկատվություն և ռեսուրսներ:



## About Penal Reform International -ի (Միջազգային բանտային բարեփոխումներ) մասին

Penal Reform International-ը ոչ կառավարական անկախ կազմակերպություն է, որը զարգացնում և նպաստում է ողջ աշխարհում քրեական արդարադատության խնդիրների արդար, արդյունավետ և համաչափ արձագանքներին:
Մեր աշխատանքի նպատակն է՝ խթանել քրեական արդարադատության համակարգեր, որոնք պաշտպանում են բոլոր մարդկանց իրավունքները և չեն վնասում: Մենք իրականացնում ենք մարդու իրավունքների գործնական ծրագրեր և աջակցում ենք քրեական արդարադատությունն արդար ու արդյունավետ դարձնող բարեփոխումներին:
Մեր առաջնային խնդիրներն են՝ ապահովել անկողմնակալ դատաքննություններ, համաչափ դատավճիռների կայացման պրակտիկա, և խթանել սոցիալական վերականգնումը, ինչպես նաև պահման մարդկային պայմանները, երբ բանտարկման այլընտրանքներ չկան: Մենք աշխատում ենք երկրների առաքելությունների, տարածաշրջանային կենտրոնների, հեռավար համակարգման և գործընկերների միջոցով:

**www.penalreform.org**

FAIR AND EFFECTIVE CRIMINAL JUSTICE

**Penal Reform International Headquarters**

The Green House
244-254 Cambridge Heath Road
London E2 9DA
United Kingdom

The Hague Humanity Hub
Fluwelen Burgwal 58
2511 CJ Den Haag
Netherlands

info@penalreform.org

@PenalReformInt
@Penalreforminternational

**Penal Reform International in Central Asia**

Syganak str. 29
Nur-Sultan
Kazakhstan

info@penalreform.org

**Penal Reform International in Middle East and North Africa**

22 Amro Bin Dinar
Amman
Jordan

priamman@penalreform.org

**Penal Reform International in South Caucasus**

prisouthcaucasus@penalreform.org

**Penal Reform International in Sub-Saharan Africa**

Plot 8, Kisozi Close
Kisozi Complex
Nakasero
Kampala
P.O. Box 11455
Uganda

africa@penalreform.org

WWW.PENALREFORM.ORG